

**ՀՀ Արմավիրի մարզի Կողբավանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-1) թափուր պաշտոն զբաղեցնելու համար**

16.06.2017

2-րդ կարգի մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով.

օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վարձավճարների գանձումը.

իրականացնում է համայնքի վարչական սահմանում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումը.

հարկեր և օրենքով սահմանված վճարներ չվճարող անձանց նկատմամբ համապատասխան միջոցների կիրառման համար առաջարկություններ է կազմում և ներկայացնում աշխատակազմի քարտուղարին.

իր լիազորությունների սահմանում իրականացնում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հարցերի հետ կապված գործառույթներ.

իրականացնում է գանձապահի պարտականությունները.

աշխատակազմի քարտուղարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.

իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

2-րդ կարգի մասնագետի պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝ ա/ միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի բ/ ՀՀ սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքների, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ

կառավարության 2006թ. հունիսի 22-ի թիվ 922 –Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին » ՀՀ կառավարության թիվ 164-Ն որոշման աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ/համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա/ գրավոր դիմում /տրվում է հանձնաժողովի անունով/,

բ/ համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային

ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքուկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/, պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/ հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկով ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ/ հայտարարություն այն մասին , որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ, ե/ «Համայնքային ծառայության մասին», ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի ե կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձիք ներկայացնում են նաև զին.գրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ/ մեկ լուսանկար 3x4 չափսի,

է/ անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: փաստաթղթերն ընդունվում են Կողբավանի համայնքապետարանում և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր ժամը 10.00 –ից մինչև 15.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացված փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Կողբավանի գյուղապետարանի աշխատակազմ /գ.Կողբավան, հեռ. 093 944 500/:

Մրցույթը կկայանա 2017թվականի հուլիսի 17-ին, ժամը 12.00-ին Կողբավանի գյուղապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2017թվականի հունիսի 30-ը:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Կողբավան

Հեռ.՝ 093 944 500

Էլ.փոստ՝ armavir.tim.@mta.gov.am

**Հասցե՝** ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Կողբավան, 1 փ. 43 շենք

**Հեռ.՝** +374 237 93 944500